ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գավառի պետական համալսարանի բակալավրիատում ավարտական աշխատանքի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ՝ շրջանավարտների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծություն

ԳԱՎԱՌ 2024

Հարցման արդյունքների վերլուծությունը կատարվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից՝ 2024թ. հունիսի 12-ին:

Որակի ապահովման բաժնի վարիչ՝ Հայրապետյան Ք.

Որակի ապահովման բաժնի մասնագետներ՝ Նախրատյան Մ.,

Մուրադյան Ն.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. **Հարցման ընդհանուր նկարագիրը 3**
2. **Հարցման մեթոդաբանությունը 3**
3. **Գավառի պետական համալսարանի բակալավրիատում ավարտական աշխատանքի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ շրջանավարտների բավարարվածության գնահատում.....4**
4. **Եզրակացություններ և առաջարկություններ ...23**

I. Հարցման ընդհանուր նկարագիրը.

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) բակալավրիատում ավարտական աշխատանքի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ շրջանավարտների բավարարվածությունը գնահատելու, վերլուծություն իրականացնելու, ուսման որակը բարելավելու նպատակով Համալսարանի որակի ապահովման բաժնի կողմից ԳՊՀ բակալավրիատի շրջանավարտների շրջանում իրականացվել է հարցում նախապես մշակված առցանց (online) անանուն հարցաթերթիկի միջոցով:

Հարցման նպատակն է բարելավել ԳՊՀ-ում մասնագետների պատրաստման որակը, շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրերից, ամփոփիչ ատեստավորման կազմակերպման գործընթացից:

II. Հարցման մեթոդաբանությունը.

Հարցաթերթը բաղկացած է փակ, բաց, կիսաբաց, ինտերվալային հարցերից: Հարցաթերթի հարցերը մշակվել և կազմվել են ԳՊՀ որակի ապահովման բաժնի աշխատակիցների, դասախոսների և ուսանողների համատեղ աշխատանքի արդյունքում: Հարցաթերթի նպատակն է քանակական և որակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, որը միտված է ԳՊՀ-ում կրթության որակի, դրանով իսկ՝ մասնագետների պատրաստման որակի բարձրացմանը, շահակիցների բավարարվածության աճին:

3. **Գավառի պետական համալսարանի բակալավրիատում ավարտական աշխատանքի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ շրջանավարտների բավարարվածության գնահատում:**

ԳՊՀ 2023-2024 ուստարվա առկա և հեռակա բաժիններում սովորող 134 բակալավրի շրջանավարտներից հարցմանը մասնակցել են 73-ը, որը կազմում է բակալավրի շրջանավարտների 54,4%-ը:

1. Ընդհանուր տեղեկություններ

Հարցմանը մասնակցած շրջանավարտների թվաքանակն՝ ըստ ֆակուլտետների.

Գծապատկեր 1.

Ֆակուլտետը	**Շրջանավարտների թիվը**	**Հարցմանը մասնակիցների թիվը**	**Հարցմանը մասնակիցների տոկոսային հարաբերությունը**
Բնագիտատնտեսագիտական	**47**	**33**	**70,2%**
Հումանիտար մասնագիտությունների	**87**	**40**	**45,9%**
Ընդամենը	**134**	**73**	**54,4%**

Հարցմանը մասնակցած շրջանավարտների թվաքանակն՝ ըստ մասնագիտությունների.

Գծապատկեր 2.

Մասնագիտությունը	**Շրջանավարտների թիվը**	**Հարցմանը մասնակիցների թիվը**	**Հարցմանը մասնակիցների տոկոսային հարաբերությունը**
Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետ			
Համակարգչային ճարտարագիտություն	10	9	90%
Դեղագործական քիմիա	4	1	25%
Սերվիս	8	7	87,5%
Կենսաբանություն	5	3	60%
Քարտեզագրություն և կադաստրային գործ	3	1	33,3%
Տնտեսագիտություն	5	2	40%
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	11	5	45,4%
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	19	5	26,3%
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ			
Հայոց լեզու և գրականություն	8	6	75%
Անգլերեն լեզու և գրականություն	9	6	66,6%
Իրավագիտություն	23	10	43,4%
Պատմություն	4	3	75%
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	25	15	60%

Աղյուսակի թվային տվյալների համաձայն՝ հարցմանն առավել ակտիվ մասնակցել են Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի շրջանավարտները:

3.1 Ինչպե՞ս եք ընտրել ավարտական ավատանքի թեման, ի՞նչն եք հիմնականում հաշվի առել թեման ընտրելիս, ներկայացրեք:

1. Ընտրել եմ տվյալ թեման՝ հաշվի առնելով հետաքրքրությունս հայրենի բարբառի ուսումնասիրության ոլորտում:
2. Ինձ հետաքրքրում էր գրականագիտության տվյալ ոլորտը:
3. Թեման հետաքրքիր էր, քանի որ վերաբերում էր հայոց լեզվի դասավանդման մեթոդիկային:
4. Թեման ընտրել ենք ղեկավարի հետ խորհրդակցելով:
5. Թեման ընտրելիս հաշվի եմ առել մանկական հիշողություններս:
6. Հաշվի է առնվել թեմայի արդիականությունը և նորույթը:
7. Անգլերեն դարձվածները միշտ եղել են իմ հետաքրքրության շրջանակներում:
8. Սիրում եմ մաթեմատիկա առարկան, թեմայի ընտրության հարցում նախասիրությունս եղավ կողմնորոշիչ:
9. Թեմայի արդիականությունը:
10. Թեմայի արդիականությունից ելնելով:
11. Թեմայում ուսումնասիրվող ենթաբաժինները:
12. Թեմայի արդիականությունը:
13. Հաշվի եմ առել իմ նախընտրությունները և ղեկավարի կարծիքը:
14. Թեման ընտրելով հիմնախնդրին ավելի մանրամասն ծանոթանացա:
15. Հաշվի եմ առել թեմայի կիրառական նշանակությունը և արդիականությունը:
16. Թեման ընտրելիս հաշվի եմ առել իմ նախասիրությունները և մոբայլ ծրագրավորման փորձը:
17. Թեման արդիական էր ներկայիս դեղաբանության ոլորտում:
18. Թեման ընտրելիս հաշվի եմ առել թեմայի արդիականությունը, կարողություններս ու հմտությունները:
19. Ընտրել եմ համապատասխան ցանկից:
20. Թեման ընտրել եմ ղեկավարիս առաջարկությամբ:
21. Հաշվի առնելով արդիականությունը և ՀՀ առկա խնդիրներն ընտրել եմ թեման:
22. Հետաքրքիր թեմա էր:
23. Թեման ընտրելիս հաշվի եմ առել արդիականությունը, իրավական ոլորտում եղած բացերը:
24. Հաշվի եմ առել իմ հմտությունները հավելվածների մշակման գործում:
25. Թեման առաջարկվել է ղեկավարի կողմից:
26. Թեմայի հանդեպ հետաքրքրությունը:
27. Հետաքրքիր էր առավել մանրամասն ուսումնասիրել գործնական առաջադրանքները:

28. Ընտրել եմ՝ ելնելով թեմայի արդիականությունից:
29. Հոգեհարազատ թեմա էր ինձ համար:
30. Ամբիոնի կողմից առաջարկվել է ավարտական աշխատանքների ցանկ, որից ընտրել եմ համապատասխան թեման:
31. Ավարտական աշխատանքի թեման ընտրելիս հաշվի ենք առել թեմայի արդիականությունը:
32. Հետաքրքրված էի լիզինգով:
33. Արտադրական պրակտիկայի վայրը և ոլորտը շահադրդեցին:
34. Հաշվի է առնվել թեմայի արդիական լինելը, ոլորտում առկա խնդիրները:
35. Ընտրել եմ «Պաշարներ» թեման, որպեսզի ավելի շատ բան կարողանամ իմանալ հաշվապահությունից:
36. Հաշվի եմ առել ոլորտին վերաբերող ՀՀ-ում առկա խնդիրները և հիմնահարցերը:
37. Թեմայի արդիական լինելը:
38. Ցանկացել եմ խորացել գիտելիքներս արտոնյալ հանցակազմով կատարված սպանությունների վերաբերյալ:

3.2 Խնդրում ենք գնահատել. Որքանո՞վ եք գոհ ավարտական աշխատանքի ղեկավարի աշխատանքից, ինչպե՞ս եք գնահատում ղեկավարի կողմից Ձեզ ցուցաբերված օգնությունը.

Գծապատկեր 3.



Հարցվողների մեծամասնությունը՝ 69,86%-ը, ավարտական աշխատանքի ղեկավարի աշխատանքը գնահատել է գերազանց, 19,10%-ը՝ լավ, 8,54%-ը՝ բավարար, 2,50%-ը՝ անբավարար:

«Բավարար» գնահատականներ նշել են Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի առկա բաժնի «Սերվիս», «Ֆինանսներ /ըստ ոլորտի/», «Համակարգչային ճարտարագիտություն» և հեռակա բաժնի «Կենսաբանություն» և «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտության շրջանավարտները, որոնց ավարտական աշխատանքի թեմաներն են.

1. Ազգային պարկերի զարգացման հեռանկարները ՀՀ-ում (Գիտական ղեկավար՝ Ավագյան Մ.)
2. Երակազարկի հաճախականության չափիչ սարքի մշակում (Գիտական ղեկավար՝ Հակոբյան Մ.)

3. ՀՀ կենսառեսուրսների բնութագիրը և տնտեսական նշանակությունը (Գիտական ղեկավար՝ Ավագյան Մ.)
4. Կառավարվող գեներատորով հաստատուն հոսանքի ուժեղացուցիչի աշխատանքի սկզբունքը և օգտագործման ոլորտները (Գիտական ղեկավար՝ Հակոբյան Մ.)
5. Վճարային քարտերի դերը անկանխիկ դրամաշրջանառության իրականացման գործում (Գիտական ղեկավար՝ Հակոբյան Ա.)

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի առկա բաժնի «Հայոց լեզվի և գրականություն» մասնագիտության շրջանավարտները, որոնց ավարտական աշխատանքի թեմաներն են.

1. Վահագն Դավթյանի պոեմների լեզվաոճական առանձնահատկությունները (Գիտական ղեկավար՝ Ասոյան Թ.)
2. Գործառական ոճերի ուսուցման առանձնահատկությունները ավագ դպրոցում (Գիտական ղեկավար՝ Ներսիսյան Վ.)
3. Ազգային ճակատագրի արտացոլումը Վահագն Դավթյանի պատմական պոեմներում (Գիտական ղեկավար՝ Առաքելյան Ա.)

«Անբավարար» պատասխանը նշվել է Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հեռակա բաժնի «Պատմություն» մասնագիտության բակալավրի շրջանավարտը:

1. Մեծ Բրիտանիայի գաղութային քաղաքականությունը 19-րդ դարի վերջին ու 20-րդ դարի սկզբին: Թեմայի դասավանդման առանձնահատկությունները ավագ դպրոցի հումանիտար հոսքում (Գիտական ղեկավար՝ Պողոսյան Ա.)

2022-2023 և 2023-2024 ուսումնական տարիների համեմատությունը

Գծապատկեր 4



2022-2023 և 2023-2024 ուսումնական տարիների համեմատության արդյունքները ցույց են տալիս, որ 2023-2024 ուսումնական տարում ավարտական աշխատանքի ղեկավարի աշխատանքից շրջանավարտների բավարարվածության աստիճանը նվազել է 8,84%-ով:

3.3. Հետազոտությունը իրականացնելիս, տվյալները հավաքագրելիս՝ ինչպիսի՞ դժվարություններ ունեցաք, խնդրում ենք նկարագրել.

Հարցվողները տվել են հետևյալ պատասխանները.

1. Մարզում բնակվողների համար Ազգային գրադարանից օգտվելը դժվար է: /ՀԼ/
2. Աղբյուրների պակասի խնդիր կար, քանի որ թեմայի վերաբերյալ չի իրականացվել գիտական լուրջ հետազոտություններ: /ՊՏ/
3. Թարմացված տվյալների բացակայություն: /Ս/
4. Բույսերը սակավ էին, որոնք նախնական փուլում չէին բավականացնում փորձերն իրականացնելու համար: /ԴՔ/

5. Հայալեզու ժամանակակից գրականության պակաս, աշխատանքի քննարկման վրա ղեկավարը գրեթե ժամանակ չի տրամադրել: /ՀՃ/
6. Ոլորտի վերաբերյալ տեղեկատվության սակավ լինելը դժվարություններ առաջացրեց: /Ս/
7. Դժվարությունները հիմնականում կայացել են մոբայլ հավելվածի մշակման մեջ, լուծել եմ իմ ուժերով: /ՀՃ/
8. Մասնագիտական գրականության բացակայություն: /ԿԲ/
9. Հարցման հավաստի տվյալների հավաքագրում: /ՏՐ/
10. Հարցման մասնակիցների քիչ թվաքանակը, նշված բանկի որոշ տվյալների բացակայություն: /Ֆ/

Պատասխանների ընդհանուր արդյուքներն ուսումնասիրելիս՝ պարզ է դառնում, որ մասնագիտական, հայալեզու գրականության պակաս հիմնականում զգացվել է «Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն», «Կենսաբանություն» բաժինների շրջանավարտների մոտ, իսկ անհրաժեշտ տվյալների հավաքագրման խնդիր առաջացել է «Ֆինանսներ /ըստ ոլորտի/», «Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/», «Համակարգչային ճարտարագիտություն» բաժինների շրջանավարտների մոտ:

3.4. **Ավարտական աշխատանքի պատրաստման համար ամբիոնի կողմից տրամադրվե՞լ է արդյոք մեթոդական ուղեցույց և անհրաժեշտ ցուցումներ.**

Գծապատկեր 5



Հարցվողների մեծամասնությունը՝ 98.60%-ը, հարցին պատասխանել է «այո»՝ ավարտական աշխատանքի պատրաստման համար ամբիոնի կողմից տրամադրվել է մեթոդական ուղեցույց, 1.4%-ը նշել է «ոչ» պատասխանը:

Հարցին բացասական պատասխանել է Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի առկա բաժնի «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտության 1 շրջանավարտ:

3.5. Ավարտական աշխատանքի կատարման ընթացքում ունեցա՞ք անհրաժեշտ մասնագիտական գրականության պակաս.

Գծապատկեր 6



Հարցվողների 61,60%-ը նշել է «ոչ» պատասխանը, 38,40%-ը՝ «այո» պատասխանը: Ավարտական աշխատանքի կատարման ընթացքում գրականության պակաս հիմնականում զգացել են Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի «Սերվիս», «Համակարգչային ճարտարագիտություն», «Կենսաբանություն», «Ֆինանսներ /ըստ ոլորտի/», «Տնտեսագիտություն» մասնագիտության, ինչպես նաև Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Պատմություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Իրավագիտություն» մասնագիտությունների շրջանավարտները:

3.6 Ինչպե՞ս եք գնահատում ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման գործընթացը.

Գծապատկեր 7



Հարցվողների 57,6%-ը ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման գործընթացը գնահատել է գերազանց, 30,1%-ը՝ լավ, 12,3%-ը՝ բավարար:

Բավարար պատասխաններ նշվել են «Կենսաբանություն», «Համակարգչային ճարտարագիտություն», «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտութոյունների շրջանավարտների կողմից:

Բավարար պատասխաններ նշող ուսանողների ավարտական աշխատանքի

թեմաներն են.

1. Վահագն Դավթյանի պոեմների լեզվաոճական առանձնահատկությունները (Գիտական ղեկավար՝ Ասոյան Թ.)
2. Գետային հիդրոէկոհամակարգերում միկրոջրիմուռների կիրառումը որպես կենսաինդիկատորներ (Գիտական ղեկավար՝ Ավագյան Մ.)
3. Տեսանկարահանման միջոցով օբյեկտների հայտնաբերում և հաշվառման մոբայլ ծրագրային համակարգի մշակում (Գիտական ղեկավար՝ Ավետիսյան Վ.)
4. Համակարգչային քննության կազմակերպման թեստային համակարգերի նախագծում և մշակում (Գիտական ղեկավար՝ Խուրշուդյան Ա.)
5. ՀՀ կենսառեսուրսների բնութագիրը և տնտեսական նշանակությունը (Գիտական ղեկավար՝ Ավագյան Մ.)
6. Կառավարվող գեներատորով հաստատուն հոսանքի ուժեղացուցիչի աշխատանքի սկզբունքը և օգտագործման ոլորտները (Գիտական ղեկավար՝ Հակոբյան Մ.)
7. Գեղարվեստական պատկերավորման արտահայտչամիջոցների ուսուցման մեթոդիկան, որպես խոսքի զարգացման հիմք (Գիտական ղեկավար՝ Ներսիսյան Վ.)
8. Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային միգրացիայի կարգավորման հիմնահարցերը բնակչության եկամուտների բաշխման համատեքստում (Գիտական ղեկավար՝ Ամիրխանյան Ս.)
9. Գյուղատնտեսական վարկավորման համակարգը և արդրունավետության բարձրացման ուղիները Հայաատանի Հանրապետությունում (Գիտական ղեկավար՝ Խաչատրյան Գ.)

Ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման գործընթացի համեմատությունը 2022-2023 և 2023-2024 ուսումնական տարիներին

Գծապատկեր 8



2022-2023 և 2023-2024 ուսումնական տարիների համեմատության արդյունքները ցույց են տալիս, որ 2023-2024 ուսումնական տարում «գերազանց» գնահատականի մակարդակում նկատվել է ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման գործընթացից բակալավրիատի շրջանավարտների բավարարվածության նվազում 20,7%-ով:

3.7. Արդյո՞ք համապատասխանում են ավարտական աշխատանքի ղեկավարի, գրախոսի և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գնահատականները.

Գծապատկեր 9



Հարցվողների 49,3%-ը նշել է «ամբողջովին համապատասխանում են» պատասխանը, 19,2%-ը՝ «համապատասխանում են» պատասխանը, 17,8%-ը՝ «ընդհանուր առմամբ համապատասխանում են», 9,6%-ը՝ «չեն համապատասխանում», 4,1%-ը (3 հոգի) դժվարացել է պատասխանել հարցին:

Ավարտական աշխատանքի ղեկավարի, գրախոսի և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գնահատականները չեն համապատասխանում պատասխանը նշել են.

1. Համակարգչային տեսողության ալգորիթմների կիրառմամբ մոբայլ ծրագրային համակարգի մշակում (Գիտական ղեկավար՝ Ավետիսյան Վ.)
2. Ազգային պարկերի զարգացման հեռանկարները ՀՀ-ում (Գիտական ղեկավար՝ Ավագյան Մ.)
3. ՀՀ տոնակատարությունների զբոսաշրջային նշանակությունը (Գիտական ղեկավար՝ Ավագյան Ա.)

4. Երակազարկի հաճախականության չափիչ սարքի մշակում (Գիտական ղեկավար՝ Ավագյան Ա.)
5. Համակարգչային քննության կազմակերպման համակարգերի նախագծում և մշակում: (Գիտական ղեկավար՝ Խուրշուդյան Ա.)
6. ՀՀ կենսառեսուրսների բնութագիրը և տնտեսական նշանակությունը: (Գիտական ղեկավար՝ Ավագյան Մ.)
7. Կառավարվող գեներատորով հաստատուն հոսանքի ուժեղացուցիչի աշխատանքի սկզբունքը և օգտագործման ոլորտները: (Գիտական ղեկավար՝ Հակոբյան Մ.)

3.8 Մինչև ամփոփիչ ատեստավորումը ծանոթացե՞լ էիք գրախոսի կարծիքին.

Գծապատկեր 10



Հարցվողների մեծամասնությունը՝ 90,4%-ը, նշել է «այո» պատասխանը, իսկ 9,6%-ը՝ «ոչ» պատասխանը:

«Ոչ» պատասխան հիմնականում նշվել է Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի «Համակարգչային ճարտարագիտություն», «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» մասնագիտության հեռակա բաժնի շրջանավարտների կողմից:

Հարցին դրական պատասխանած շրջանավարտների մի մասը նույնիսկ

մանրամասնել է, թե ինչքանով է համամիտ ավարտական աշխատանքը գրախոսողի դիտարկումների հետ.

Շրջանավարտները տվել են հետևյալ պատասխանները.

1. Դիտողությունների հետ համաձայն եմ ամբողջությամբ:
2. Լիովին համամիտ եմ ու ես տեսնում էի իմ թույլ կոմերը:
3. Մասամբ եմ համաձայն, որովհետև արվել էր այն ամենը ինչ ասվել էր ինձ:
4. Այո, տեղին էին դիտողությունները:
5. Ամբողջությամբ համամիտ եմ:
6. Գրախոսի կարծիքը ողջամիտ էր, և համապատասխանում էր աշխատանքի բովանդակությանը:
7. Համամիտ եմ, քանի որ ունեի բացթողումներ:
8. Համամիտ չեմ, քանի որ աշխատանքը անթերի էր:
9. Չեմ ծանոթացել և չեն առաջարկել ծանոթանալ:
10. Միանշանակ համամիտ եմ:
11. Ես ամբողջովին համամիտ եմ գրախոսի դիտողությունների հետ:
12. Բոլոր դիտողությունների հեր համամիտ եմ:

3.9. Ձեր գիտելիքները որքանո՞վ են օբյեկտիվ գնահատվել.

Հարցին բացասական են պատասխանել միայն Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի առկա բաժնի «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտության երկու շրջանավարտներ, որոնց ավարտական աշխատանքի թեմաներն են.

1. Տեսանկարահանման միջոցով օբյեկտների հայտնաբերում և հաշվառման մոբայլ ծրագրային համակարգի մշակում: (Գիտական ղեկավար՝ Ավետիսյան Վ.)
2. Համակարգչային քննության կազմակերպման համակարգերի նախագծում և մշակում: (Գիտական ղեկավար՝ Խուրշուդյան Ա.)

3.10.Պահանջե՞լ եք ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովից լրացուցիչ մեկնաբանություններ Ձեր գնահատականի վերաբերյալ.

Գծապատկեր 11



Հարցվողների՝ 94,5%-ը նշել է «ոչ» պատասխանը՝ գտնելով, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովն օբյեկտիվ է գնահատել ավարտական աշխատանքը, և գնահատականի վերաբերյալ լրացուցիչ մեկնաբանության կարիք չկա, 5,5%-ը նշել է «այո» պատասխանը:

«Այո» պատասխան հիմնականում նշվել է Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի հեռակա բաժնի «Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/», «Կենսաբանություն» մասնագիտության, Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի առկա բաժնի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության շրջանավարտների կողմից:

«Այո» պատասխան նշող շրջանավարտների ավարտական աշխատանքների թեմաներն են.

1. Չթեքվող խոսքի մասերի ուսուցման առանձնահատկությունները միջին դպրոցում: (Գիտական ղեկավար՝ Ասոյան Թ.)
2. Հատկանիշ ցույց տվող բառերի քերականական առանձնահատկությունները և նրանց ուսումնասիրումը տարրական դասարաններում: (Գիտական ղեկավար՝ Սարգսյան Ռ.)

3. ՀՀ կենսառեսուրսների բնութագիրը և տնտեսական նշանակությունը: (Գիտական ղեկավար՝ Ավագյան Մ.)

4.ԲՏՖ հեռակա բաժնի հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ շրջանավարտը ավարտական աշխատանքի թեման չի գրել:

3.10.Տեղյա՞կ եք արդյոք ամփոփիչ ատեստավորման արդյունքի բողոքարկման ընթացակարգին.

Գծապատկեր 12



Հարցվողների 72,6%-ը նշել է, որ տեղյակ է ամփոփիչ ատեստավորման արդյունքի բողոքարկման ընթացակարգին, 27,4%-ը նշել է «ոչ» պատասխանը: «Ոչ» պատասխան հիմնականում նշվել է երկու ֆակուլտետների հեռակա բաժնի շրջանավարտների կողմից:

4. **Հարցվողները ներկայացրել են իրենց առաջարկությունները, նկատառումները, դիտողությունները՝ ամփոփիչ ատեստավորման գործընթացը բարելավելու նպատակով.**
   1. Ցանկալի կլիներ, որպեսզի հանձնաժողովի կողմից հարցերը հնչեին ավարտական աշխատանքի ներկայացնելուց հետո: /ՀԼ/
   2. Ամեն ինչ շատ լավ էր կազմակերպված, հատկապես ընկեր Նալբանդյանի արագ կողմնորոշվելու շնորհիվ առաջացած խնդիրներն արագ լուծում էին ստանում: /ՀԼ/
   3. Ցածր կուրսի ուսանողները խանգարում էին պաշտպանության ընթացքում, իմ կարծիքով գործընթացը պետք է կատարվի հանձնաժողովի անդամների և ավարտական աշխատանքը ներկայացնող ուսանողների ներկայությամբ:/ ՏՐ/
   4. Կիրառել առցանց հարթակներ, որտեղ ուսանողները կարող են հանձնել իրենց աշխատանքները, ստանալ գնահատականներ: Ներգրավել ոլորտի ներկայացուցիչներ, ովքեր կգնահատեն ուսանողների աշխատանքները՝ նշելով ոչ միայն սխալները, այլ նաև բարելավման ուղիները: /ՀՃ/
   5. Կցանկանայի այնպիսի մատչելի հարցեր տրվեն ուսանողին, որոնց նա կկարողանա առանց դժվարանալու պատասխանել: /Ս/
   6. Չընդատել, լսել բոլորին նույն համբերությամբ, դրանով իսկ կխրախուսեն ուսանողին, ով գտնվում է լարված վիճակում և հնարավոր է չկարողանա ցույց տալ իր կարողություններն ու գտելիքները: /ՀՃ/
   7. Հանձնաժողովը չկարողացավ գնահատել ուսանողներին հավուր պատշաճի: Լավ ներկայացված, մեծ աշխատանք տարված աշխատանքը գնահատեցին ցածր, քան մյուսները: /ՀՃ/
   8. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը գնահատման պրոցեսը կատարում է որոշ հանգամանքներ հաշվի չառնելով, գնահատման պրոցեսը համարում եմ վատ, առաջարկում եմ հետագա խնդիրներից խուսափելու համար վերանայել հանձնաժողովի անդամների աշխատանքը, փոխել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի ամբողջ կազմը: /ՀՃ/
   9. Եթե պահանջում են աշխատանքում փորձեր, հետազոտություններ, ապա թող

առաջարկվող թեմաները համապատասխան լինեն: /ԿԲ/

10. Ավարտական աշխատանքի ներկայացման համար տրամադրել ոչ թե 5, այլ գոնե նախատեսված 10 րոպեն, որպեսզի ուսանողը հասցնի ներկայացնել կատարված աշխատանքը: /Ֆ/

IV. Եզրակացություններ և առաջարկություններ.

Ամփոփելով հարցման արդյունքները՝ կարող ենք նշել, որ հարցմանը մասնակցել են առկա և հեռակա ուսուցման բաժինների բակալավրիատի շրջանավարտների ընդհանուր թվի 54,4%-ը, հետևաբար հարցման արդյունքները ներկայացնում եմ բակալավրիատում ավարտական աշխատանքի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ շրջանավարտների բավարարվածության գնահատման հնարավորինս ամբողջական պատկերը:

Հարցվողների բացարձակ մեծամասնությունը նշել է, որ ավարտական աշխատանքի թեման ընտրել է նախապես ամբիոնի կողմից հաստատված ավարտական աշխատանքների թեմաների ցանկից՝ հիմք ընդունելով թեմայի արդիականությունը, ուսուսումնասիրվածության աստիճանը, թե ինչքանով է համապատասխանում հասարակության արդի պահանջներին:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ շրջանավարտներն մեծ մասը բավարարված են Համալսարանում ամփոփիչ ատեստավորման կազմակերպման գործընթացից, տեղյակ են, որ բուհում գործում է ամփոփիչ ատեստավորման արդյունքների բողոքարկման ընթացակարգ, մինչ ամփոփիչ ատեստավորումը նախապես ծանոթացել են գրախոսի կարծիքին, անհրաժեշտության դեպքում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովից պահանջել են մեկնաբանություն գնահատականի վերաբերյալ: Սակայն, պետք է լուրջ ուշադրություն դարձնել նաև հարցման ընթացքում գրանցված բացասական պատասխաններին և ցածր գնահատականներին:

Այսպես.

1. Հարցվողները գնահատել են ավարտական աշխատանքի գիտական ղեկավարին և

գերակշռող բարձր գնահատականների շարքում գրանցվել են նաև ցածր միավորներ, որոնք հիմնականում տրվել են առկա բաժնի «Սերվիս», «Ֆինանսներ /ըստ ոլորտի/», «Համակարգչային ճարտարագիտություն» և հեռակա բաժնի «Կենսաբանություն» և «Համակարգչային ճարտարագիտություն», առկա բաժնի «Հայոց լեզվի և գրականություն» մասնագիտության շրջանավարտների կողմից:

«Հետազոտությունը իրականացնելիս, տվյալները հավաքագրելիս՝ ինչպիսի՞ դժվարություններ ունեցաք և արդյո՞ք մեթոդական ուղեցույց և անհրաժեշտ ցուցումներ տրվել է նախապես» հարցին հարցվողների մեծամասնությունը նշել են, որ ավարտական աշխատանքի պատրաստման համար ամբիոնի կողմից ժամանակին տրամադրվել է մեթոդական ուղեցույց, և տրվել են անհրաժեշտ ցուցումներ, սակայն նշվել են նաև բացասական պատասխաններ, որոնք տրվել են հեռակա բաժնի «Համակարգչային ճարտարագիտություն», «»Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն» մասնագիտությունների շրջանավարտների կողմից:

Շրջանավարտները ներկայացրել են նաև այն դժվարությունները, որոնց հանդիպել են հետազության ընթացքում:

Դրանք են.

1. Ազգային գրադարանից օգտվելը դժվարը մարզում բնակվողների համար:
2. Աղբյուրների պակասի խնդիր կար, քանի որ թեմայի վերաբերյալ չի իրականացվել գիտական լուրջ հետազոտություններ:
3. Թարմացված տվյալների բացակայություն:
4. Բույսերը սակավ էին, որոնք նախնական փուլում չէին բավականացնում փորձերն իրականացնելու համար:
5. Հայալեզու ժամանակակից գրականության պակաս, աշխատանքի քննարկման վրա ղեկավարը գրեթե ժամանակ չի տրամադրել:
6. Ոլորտի վերաբերյալ տեղեկատվության սակավ լինելը դժվարություններ առաջացրեց:
7. Դժվարությունները հիմնականում կայացել են մոբայլ հավելվածի մշակման մեջ, լուծել եմ իմ ուժերով:

8. Մասնագիտական գրականության բացակայություն:

Գավառի պետական համալսարանի բակալավրիատում ավարտական աշխատանքի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ՝ շրջանավարտների բավարարվածության գնահատման արդյունքներն ամբողջովին ուսումնասիրելու և վերլուծելություն իրականացնելու համար կարևոր են նաև որակական բաց հարցերը:

Հարցվողների մեծամասնությունն ‹‹Առաջարկություններ, նկատառումներ, դիտողություններ›› բաժնում հիմնականում նշել են հետևյալ առաջնահերթությունները.

1. Ցանկալի կլիներ, որպեսզի հանձնաժողովի կողմից հարցերը հնչեին ավարտական աշխատանքի ներկայացնելուց հետո: /ՀԼ/
2. Ամեն ինչ շատ լավ էր կազմակերպված, հատկապես ընկեր Նալբանդյանի արագ կողմնորոշվելու շնորհիվ, առաջացած խնդիրներն արագ լուծում էին ստանում: /ՀԼ/
3. Ցածր կուրսի ուսանողները խանգարում էին պաշտպանության ընթացքում, իմ կարծիքով գործնթացը պիտի կատարվի հանձնաժողովի անդամների և ավարտական աշխատանքը ներկայացնող ուսանողների ներկայությամբ:/ ՏՐ/
4. Կիրառել առցանց պլատֆորմներ, որտեղ ուսանողները կարող են հանձնել իրենց աշխատանքները, ստանալ գնահատականներ: Ներգրավել ոլորտի ներկայացուցիչներ, ովքեր կգնահատեն ուսանողների աշխատանքները՝ նշելով ոչ միայն սխալները, այլ նաև բարելավման ուղիները:
5. Կցանկանայի այնպիսի մատչելի հարցեր տրվեն ուսանողին, որին նա կարողանա առանց դժվարանալու պատասխանել:
6. Չընդատել, լսել բոլորին նույն համբերությամբ, դրանով իսկ կխրախուսեն ուսանողին, ով գտնվում է լարված վիճակում և հնարավոր է չկարողանա ցույց տալ իր կարողություններն ու գտելիքները:

<u>Ամփոփելով հարցման արդյունքները՝ ԳՊՀ որակի ապահովման բաժինը ներկայացնում է հետևյալ առաջարկությունները.</u>

1. Կրթական ծրագրի ղեկավարները և ֆակուլտետային պատասխանատուները

հետևողական լինեն, որպեսզի ժամանակին բաշխվեն ավարտական աշխատանքի թեմաները,

2. Ամբիոնների կողմից ավարտական աշխատանքի թեմաների ցանկը կազմելիս՝ կարևորել հետևյալ չափանիշները.

✓ Արդիականություն, ուսումնասիրության աստիճանը,

✓ Գրականության առկայությունը:

3. Գրադարանը պարբերաբար համալրել մասնագիտական հայալեզու գրականությամբ:

4. Ուսումնասիրել ուսանողների դժգոհություններն ու առաջարկությունները 2024-2025 ուսումնական տարվա բակալավրիատում ավարտական աշխատանքի կատարման ընթացքը, ամփոփիչ ատեստավորման գործընթացը կազմակերպելիս:

Գավառի պետական համալսարանում բակալավրիատում ավարտական աշխատանքի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ՝ շրջանավարտների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծությունը, եզրակացություններն ու առաջարկությունները հղվել են համապատասխան ստորաբաժանումներ (ֆակուլտետներ, ամբիոններ), որպեսզի ուսումնասիրվեն, ԳՊՀ ռեկտորատի, ապա գիտական խորհրդի նիստերում ներկայացվեն համապատասխան լուծումներ և առաջարկություններ, ձեռնարկվեն միջոցներ՝ ուսուցման և ուսումնառության արդյունավետության ապահովման, ԳՊՀ-ում մասնագետների պատրաստման որակի բարձրացման և արդյունքում՝ շրջանավարտների գոհունակությանն արժանանալու նպատակով: